21. ԱՍԼ ՁԱԴԱ

Կէղի, չէղի մէ թագավորրմ կէղի։ Թագավորին ըսկի ավլաղ չէղի։

Թագավոր կնկան կասա թե.— Մըզի ավլաղ չկա, մենք էլ օր ծերացանք, մեռանք մեր հարստութուն ուրիշ կուտե։ Մենք մեր ծեռքով մի օղորմութուն տանք ախքտներուն, բալքի աստված մզի որթի մի տա։

Թագավորն ու թագուհին գելին ուրանց ուժը կցրվին ախքատոց։

Գելի, կբռնա կնկա ծեռք ու կընգնա ճամբախ։ Կէրթա ուրիշ թագավորի խոզ։

Էդտեխ մե քաղաքի մեջ կմտնին։ Կտեսնին օր մե տան հ'առեճ ժողովուրդ քոմած են, գելին ու կմտին։

Թագավոր կնկան կասա.— Էդտեխ կանիր, ես էրթամ տեսնիմ ի՞նչ պատճառով գելին կմտին էդտեխ։

Կէրթա մարթոցմ կխառցու.— Ըս ի՞նչ բան է օր ըստեխ գելին ու կմտին։

Կըսա թը.— Էդտեխ խելոք մարթիկ կան, մարթու խելք կսովրցուն։

Կըսա.— Ի՞նչ տեսակով խելք կսովրցուն մարթու։

— Խոսքին մե կուռուշ կառին, մե խոսք մարթու կըսին։

Թագավոր ներս կմտի, ուր գլխադալուկ էդտեխ կղրուցա։ Էդ-տեխ մե խելոք մարթըմ կըսա.

— Քըզի կիտամ դեղըմ օր, դու իմ խոսքով նստիս կանիս։ — Դեղն կիտա.— Որտեխ արև կմտի, էն տեխ կնստիս, արև կառի էն գհից դելիս։

Թագավորն առավ դեղը։ Դից դուս էկավ։ Էկավ կնկան հասավ, դեղը տվեց կնկան, ճամբախ ընկան։

Ին ամիս ճամբախ գացին, մեկ քաղքի մը ռաստ էկան։ Տեխ արև մտավ, քաղքի դերգըխի (դռան) հ՝առեճը կնստի։

Դիշերը էդ թագավորի կնիկը օտաց կանավ։ Ազատեց մե տղա էղավ։ Իրեք հատ աղավնի էկան էրեխեն առան փաթթեցին։

Էն մեկ աղավնին ըսաց.— Էկեք մեր նոր-մանուկին օրշնիթք տանք։

Մեկը օրշնեց, ըսաց.— Իսկի սուր քու ջանի մեջը չբանիր։

Մեկել լէ ըսաց.— Քարերից, պալերից ցըքին, բան չէլնի։

Մեկել լէ ըսաց.— Ո՞ր տեխ էրթաս, քու գործն աչող ըլլի։

Էն տեսակ օր կպատմին, դռնպահ դև կէղի։ Լուսուն շուտ կէր-թա էդ քաղքի թագավորին կպատմի, կըսա թե.

— Էս գիշերվան մեջ մե տղա էղավ, աղավնիներ էկան ինոր էսպես օրշնիթք տվեցին։ Եթե օր էն տղին բերես էփես, էնոր միսն ուտես, էնոր օրշնիթքը, էնոր ուժը քըզի գիգա։

Էդ խոսքն օր թագավոր լսեց, դևին ըսավ թե.— Շուտով կգը-նաս էն տղի հոր ու մորը և էն տղենը հետը կբերես։

Դևն լսեց թագավորի խոսքը։ Շուտով գնաց, բերեց էն մար-թուն։

— Ահա՛, թագավոր, բերեցի էն մարթուն։

Ըսաց.— Դնա էն տղի համար գինը զրուցե, ի՞նչ օր կուղես, տուր։

Դևը դարձավ էդ մարթու մոտը, ըսաց.— Տղետ ծախի։

— Ի՞մալ, մարթ ուր տղեն կծախա։

Դև վախ կիտա էդ մարթուն, թե.— Չծախես էլ, թագավոր տը-ղեդ քըզնից կառնի։

Մարթն ուր վախին, էլավ ուր տղեն ծախեց։ Դևն տվեց փա-բեն, առավ զէդ տղեն, տարավ թագավորին։

Թագավոր ըսավ.— Տար, տղեն լավ տեխ մը մորթի, բեր ֆը-ռոն (փուռ) տուր, թըխ էփի։

Դևը լսեց թագավորին, տարավ զտղեն քաղաքից խանեց, տա-րավ սարը, տղին գետին գնեց, քաշեց թուրը օր էդ տղին մորթեր, թուր տղի ջանին չքիսավ։

Դևն ասաց. «Թուր, էդոր չան չի բանիր, էրթամ քարըմ բերիմ, թորկիմ վրա, թող մեռնի»։

Քար բերեց, իմա՛լ էնեց, տղին չի դիպավ։

Ասաց «Աստծուց է իդա բանը, էդ էրեխեն չի սպանվի, արի ես իտոր հոլրդ (հյուղակ) շիքեմ»։ Հոլրդ շիքեց, տղին մեջ դնեց։ Գնաց մե օշխարի ջանդակ տվեց ֆռոն, տարավ թագավորին տվեց։

Թագավոր ասաց.— Էդի օշխարի միս է։

— Չէ՛, թագավոր, իսանի միսն էլ օշխարի մսի համն կունենա՞։

Աստծուց հրաման էղավ, ջեյրանըմ միշտ կէրթեր էդ տղին ծիծ կիտեր։ Իրեք տարի ժամանակ ջեյրանը ծիծ տվավ էդա տղին։

Էդ թագավորի տղեն գնաց էդ սար ավ ու կուշ էնելու։ Ռաստ էկավ էդ հոլրգին, ջեյրանը փախավ, մե իրեք տարեկան տղե մի հոլրգից էլավ ջեյրանի հետ ուզեց փախել։ Տղին բռնեցին, տարան թագավորին տվեցին։

Թագավոր տեսավ օր տղեն շատ խորոտ էր։ Թագավոր շատ ուզեց էդ տղին, էնեց իրեն տղա։ Մե վարժապետըմ բռնեց, գտած տղին ու ուր տղին վարժատուն դրեց։

Վեց տարի վարժապետ կարդրցուց, էդոնց դաս տվեց։ Էդ գըտուկ տղեն օր բը զօր կրետներ, թագավորի տղեն ավելի ա ընդեր ի։

Վեց տարին օր թըմավ, հանեցին, թագավորին ջանց տվեցին. թագավոր ասաց.

— Էկեք էս տղին անուն դնանք։

Անուն գնեցին Ասլ-Զադա (հարազատ)։

Նորեն վարժապետին տվեց.— Պակաս բաներ կա, տանիս. թըմիս։

Տարավ էրկու տարի էլ կարթրցուց, բերեց թագավորին նշանց տալու, թագավորը մտիկ էրավ օր էդ դտածուրիկ տղեն ուր տղից շատ հ'առեճ է։

Թագավոր վարժապետի իրավունքը տվեց ու էորոխկեց։

Սիաներու սեյիսին պատվիրեց, ասաց.— Մե, մե, լավ ծի կբերես տղեքներու համար։

Սեյիս գնաց, էրկու ծի դուրս քաշեց, թագավորի տղեն ծին հեծավ։ Ասլ-Զադեն ուզեց օր ինք լէ հեծներ, բայց ծին իրան չտարավ։

Ասլ-Զադեն ասաց.— Վնաս չկա, իմ ախպեր թըխ խեծի, ես ոտքով կէրթամ։

Էրկ օր սարեր պտտեցին։ Էն մի օր թագավորի տղեն հիվընդ-

ցավ։ Մե տարի ինչքան լավ դոխտուր վրեն բերեցին, էդոր ցավ չիմցան։

Ուրանց միջոց մե խելացի մարթըմ ըսաց.— Կէղի օր սեյրի (մոգություն) բան է, էտոր հ'ընգեր թե էդոր ցավն հ'իմնա։

Թագավոր ըսաց.— Ասլ-Զադեն մանկութ էնոր հետ կարթըցե, ուր սրռ թող էնոր ասի։

Ասլ-Զադին ասին օր էրթա էնոր ցավն խասկնա իգա, թագավորին ասի։

Ասլ-Զադեն գնաց էն տղի մոտ, ըսաց.— Ա՛յ տղա, քու ցավն ի՞նչ ա, ընծի ըսա։

Ըսաց. —Ես ցավ չունիմ։

— Չէ՛, քու ցավն ընծի պտի ըսիս։

Թագավորի տղեն ըսաց թե.— էն օր օր հիվանդցեր իմ մինչև էսօր, ես քառասունութ դևի քուրոջ հետ սիրահարվեր եմ, էնոր խամար խիվանդ եմ։

Ասլ-Զադեն գնաց թագավորին ըսաց.

— Քու տղեն քառասունութ դևի քուրոջ վրեն սիրահարված ա։

Թագավոր ըսաց էդոր.— Տաս տարի հ'առեջ, ես ուզեցի դևերի հետ կռիվ էնել, դևերի տեխ ասի (անառիկ) էր, ինչքա՞ն ասքար տանիմ օր էդոնց աղթիմ, օր էդոնց քուրը բերիմ։

Ասլ-Զադեն ըսաց.— Թագավոր, ես քեզնից ասքար չեմ ուզե, մինակ ընձի թոր, ես հետ էրթամ, ես կբերեմ։

Թագավոր ըսաց.— Թե դու կէրթաս կբերես, դու գնա՛։

Քառասունութ կգրանոց գուրզըմ տվեց շիքել, թագավորի տղեն ծին խեծավ, Ասլ-Զադեն ընկավ հ'առեճ, ճամբախ էլան։

Շատ ու քիչ գնացին, քառասունութ արաբի սարին հանդիպան։

Էգ գիշեր մինչև լուսացավ, էլան քառասունութ արաբի խաս-բախչի մեջ հավուզի վրա նստան։

Արաբներու գլխավորն էլավ մտիկ էնեց, իշկեց տեսավ օր էրկու մարթ մե ծի խաս-բախչի մեջն են։

Էլավ, չորս մարթուն ճամփեց, ըսաց.— Կէրթաք, էն էրկու մարթ կսպանեք, ծին էլ կառնեք գիգաք։

Գացին, զատվանց բռռացին,— Դու ի՞նչ մարթ եք, էկեր եք, մեր խաս-բախչի մեջ ծին թորկեր եք, դուք լէ անվախ նստեր եք։

Ասլ-Զադեն բռռաց,— Ճիշտ օր անկիրթ եք, մի էկեք մոտացեք, ըսեք տեսնինք ի՞նչ կեսիք։

Էկան, ուզեցին օր էդոր սպանին։

Ասլ-Զադեն բռնեց չորսին էլ ոտք ու ծեռ կապեց, ուր կուշտ գնեց։ Թագավորի տղեն քնուկ էր, չիմցավ։

Մի սահաթ անցավ, մեծ արաբ էլավ իշկեց օր գացած նստած են հետ կգրուցեն։

Էլավ չորս էլ ճամփեց, ըսաց.— Կէրթա՛ք էն մարթեր կսպանեք, ձեր ընգերներին կծեծեք, գացած են նստած են խնամութո՞ւն կէնին։

Էնոնք էլ գացին, հեռվանց բոռացին, թե.— Դու ի՞նչ մարթ նք, օր էկեր եք խաս-բախչի մեջ նստեր եք, մեր անունը չ՚ը լսեր եք։

Ասլ-Զադեն կանչեց.— Ի՞նչ քրդու պես կպոռաք, էգեք ըստեղ, զրուցեք։

Էդոնք տեսան օր ուրանց մարդիկ կապուկ, ավելի հերսոտ էկան։ Ասլ-Զադեն էդոնց էլ բռնեց ու ութի վիզն էլ կտրեց։

Թագավորի տղեն հըլե քնած ա։

Արաբների ճոչ էլավ իշկեց օր ութին լէ սպաներրի, ըսաց.

— Էլեք էրթանք, քիչ-քիչ էրթալով մըզի ամենքս էլ կսպանեի, էրթանք սպաննենք, մեր ախպրտոց հեֆ (վրեժ) ուրանց մոտից առնինք։

Էլան էկան օր արաբներու մեծը բոռաց.— Դու ի՞նչ մարթ նք օր էկեր եք ըստեղ, ութ մարթ էլ սպաննեցիք։

Ասլ-Զադեն ըսավ թե.— Ի՞նչ քուրդերու պես կպոռաք, արեք էստեխ, աղեն չիմնա։

Էդոնք չատ հերսոտի էկան, ուզեցին օր Ասլ-Զադին սպանեն։

Վերուց Ասլ-Զադեն գուրզը, աչ ու ձախ չիշկեց, քառասունին լէ ըսպանեց։

Թագավորի տղեն քնուկ է։ Ասլ-Զադեն թագավորի տղին հ՚իմցուց, ըսաց.

— Ելի էրթանք։

Գնացին էն դեհից։ էն մեկել գիշեր տվեցին էլան դևերի սար։ էրկ օր էլան, էլան դևերու խաս-բախչի մեջ։ էսոնք քառասունութ դևին, էսոնց քուրոջ վրեն էր սիրահարված թագավորի տղեն, էրազի մեջն էր տեսած։

Հավուզի վրա նստան։ Սահաթ ութին մեծ դևն էլավ, էս կողմ. էն կողմ իշկեց, խաս-բախչի մեջ էրկու մարթ մե ծի տեսավ։

Էլավ չորս դևի ճամբեց.— Գացե՛ք, սպանեք էն էրկու մարթ ու էկեք։

Դևեր գացին, մոտըցան էտոնց թե.— Դու ի՞նչ մարթ եք։

Ասլ-Զադեն ըսաց.— Մենք էկեր ենք խնամութեն, բարեկամութեն կուղինք։

— Մենք մեր քուր չիտանք ծըղի, դուք խողածին եք,— Դևեր պատասխանեցին,— ջուտ էնեք ձեր գլոխ տվեք, մենք հետ կէրթանք։

Ասլ-Զադեն պատասխանեց.— Էկե՛ք, մոտրցեք, առեք գլուխ գնացեք։

Էկան, մոտրցան, հասան իրարու։ Ասլ-Զադեն շորսին կապեց։ Թագավորի տղեն քնուկ էր, չհիմցավ։

Մեկ սահաթից հետո մեծ դևն էլավ իշկեց, տեսավ որ նստած են իրարու կուշտը։ Դարձավ տուն մտավ, ըսաց.

— Էլեք էրթանք, մեր ախպրտիք գացած, նստած կզրուցին, խնամութուն կէնին։

Էլան, քառսուն շորսն էլ խըտ իրար գացին, ուղին օր սպանեն։

Մեծ դև բոռաց էդոնց.— Դուք ի՞նչ մարթ եք, էկեր եք էդ տեխ նստեր եք։

Ասլ-Զադեն ըսաց.— Մենք էկեր ենք խնամութեն, մարթկութեն խնդրելու։

Ըսաց.— Դուք էրկու մարթով էկեր եք, մեր քառսունութ մարթու քո՞ւրը կուզեք, չե՛նք տա։

Ասլ-Զադեն ըսաց.— Կռվով էլ էղի ձեր քուր պտի տանինք, խաթրով էլ էղի, կտանինք։

Էդոնք ուզեցին կռիվ։

Ասլ Զադեն վերուց գուրզը աչ ու ձախ չիշկեց, քառսունը-շորսին էլ էցկեց գետին։

Մեծ դևն ըսաց.— Մըզի մ'սպաներ, մեր քուր կիտանք քու աղին։

Էլան են շորսն էլ հարցըկեցին, վերցին թագավորի տղեն, գացին դևերու տունը։

Տղին ճամփին ախչկա հ'օդեն։

Էդտեղ ուրանց խաց կերան, քեֆ էնեցին, էղան խնամի։ Էդ դևերու տուն մացին։

Լուսցավ։ Դևեր ըսեցին,— Ասլ-Զադա, դինա՞ս ինչ կա։

Ըսաց.— Չէ՛, ես ի՞նչ գինամ ի՞նչ կա։

Ըսաց.— Մեր քուր տվեցինք քու աղին, դուն պտի էրթաս Գյուլի-Զար բերիս քեզ խամար։

Դևեր կուզին մե տեսակով Ասլ-Զադին կորցին, օր թագավորի տղեն էլ սպանին։

Ըսաց.— Ես Գյուլի-Զարի տեխ չեմ գիտեր։

Ըսաց.— Ընչի՞, մեր տեխ գիցա՞ր, Գյուլի-Զարի տեխ էլ պիտի գինաս, ընչի՞ չգինաս։

Ասլ-Զադեն էլ ուր աստված կղանչեց, էլավ ճամբախ գնաց։

Շատ ու քիչ, մենակ աստված դինա, ճամբախ գնաց, մե հալիվորու մը ռաստ էկավ։

Բարև տվեց խալիվորին, խալիվոր էդոր բարևն առեց, ըսաց.—

— Բարով, խազար բարով, թագավորի տղա։

Ըսաց.— Պապե ջան, դու ի՞նչ դինաս, թե ես թագավորի տղա եմ։

Կրսե.— Ես գինամ օր դու թագավորի տղա ես, դու կէրթաս Գյուլի-Զարի համար։

Ըսաց.— Պապե ջան, Գյուլի-Զարի համար կէրթամ, աման էնոր տեխ չըմ գինա։

— Քու ճամփողի վիզը կոտրի, կէղի օր ես քըզի ռաստ չի դի։

— Պապե ջան, թե դինաս, պատմա ընծի, օր ես էրթամ բերեմ Գյուլի-Զար։

— Հա՜, գինամ, կպատմիմ, կէրթաս, աստուծով լէ կբերիս։

— Պապե, դե պատմա օր էրթամ բերիմ։

Ըսաց.— Էս բանցր սար օր կերևա, կելլիս գլոխ, մե դուրանըմ կա, էդ դուրան սմբողջ քար դարձած մարթ են։ Չվախենաս, կէրթաս էն քարերի մեջ, մե պզտիկ տուն մի կա, էն դռան վրա կէրթաս կայիմ կբոռաս. «Գյուլի-Զար»։ Էնի կասա. «Կոռագա՜ր քար, դըհա քու ծեն կա՞», մինչի քու չոքեր կէղիս քար, չվախենաս։ Մեկ էլ կայիմ կբոռաս. «Գյուլի-Զար». էն կասա. «Կոռագար քար, դրհա քու ծեն կա՞». մինչև ճղլակ կէղիս քար, չվախենաս։ Մեկ էլ օր կայիմ կբոռաս. «Գյուլի-Զա՜ր», էնի ծեն կիտա, կասա. «Զա՜ն, Ասլ-Զադա, քու ծեն կիգա, ի՞նչ կուղիս»։ Դու կասիս. «Քու ծեռ բեր տեսնիմ»։ Էն օր ծեռ կխանա օր տեսնիս, կայիմ բլակը կբըռնիս։ Ինչքան աստծու սուր ու թուր կզարկա քեղի, աստծու սեր կուտա, չթորկես, մինչև քու քար ջան, չանե իսանի ջանդակ։

Պապեն օր էդի թարիֆ էնեց, պապեի հետ բարև մնա էրեց ու ընգավ սարի ճամբախ։ Գնաց, սարն օր էլավ, ընգավ դուրան, պապեի ըսած խոսքեր դրուստ էր, իսանի դարձած քարեր տեսավ։ Գընաց պզտիկ դուռը՝ կայիմ ծենով բոռաց.

— Գյուլի-Զա՜ր։

Գյուլի-Զար բոռաց.— Կոռադա՜ր քար, քու ծեն դրհա կուգա՞։ Ասլ-Զադեն մինչև չոքեր էղավ քար։

Մեկ էլ բանցր ծենով բոռաց.

— Գյուլի-Զա՜ր։

Բոռաց.— Կոռադար քար, քու ծեն դրհա կուգա՞։— Ասլ-Զադեն մինչև ճղլակ էղավ քար։

Մեկ էլ կայիմ ծենով բոռաց.

— Գյուլի-Զա՜ր։

— Ջա՜ն,— ասաց,— Ասլ-Զադա, քու ծեն ընգա՞վ իմ անկաջ, ի՞նչ կուզես։

Ըսաց.— Քու ծեռք բե տեսնիմ։

Ձեռքը դռան փակից դուս հանեց, Ասլ-Զադեն կայիմ բլակը բռնեց։

Գյուլի-Զար էնքան լավա ընկավ, ատու սուր ու թուր թալեց, թե. «Իմ ծեռ թոր, ես տկլոզ եմ»։

Ըսաց.— Քու ծեռ չեմ թորկի, մինչև իմ ջան չդարցուա ավալ-քվան ջան։

Գյուլի-Զար ուր սեյրի վարոց ուր ջերից իանեց, զարկեց, ըսաց.

— Դառնա առաջվան ջանը։

Ասլ-Զադեն դարձավ ավալքվան մարթ։ Գյուլի-Զարին տնից իանեց, ուր խետ առավ օր իզեր։

Ըսաց.— Ասլ-Զադե, կտեսնի՞ս էս քարեր, հ'ըմեն իսան է էզած, դարձած են քար։

Ըսաց.— Էդոնց տեղ կա՞ օր էդոնք դառնան ավալքվան իսան։

Ըսաց,— Կա՜, ինչի՞ չկա, ի՞մալ քըզի դարցուցի իսան, էնպես էլ էնոնց կդարցնենք իսան։ — Հանեց ջերից սեյրի վարոց, Ասլ-Զադի ձեռք տվեց։ Ասլ-Զադեն առեց, ընգավ էդ քարերու վրեն, ըսաց.

— Դառնան ավալքվան իսան։ — Քարեր դարձան իսան։

Ասլ-Զադեն ու Գյուլի-Զար խըդ իրար ընկան ճամբախ։ Շատ ու քիչ էկան, էկան խասան քառսունութ դևերու տուն։

Դևեր տեսան օր Ասլ-Զադեն ու Գյուլի-Զար էկան։ Ծի մը Գյուլի-Զարին տվեցին, մեկ լէ ուրանց քուրոջ տվեցին, տարան ճամփու դրեցին։

Թըխ թագավորի տղեն ու դևերու քուրն խըդ իրար զրուցք էնին էրթան, Գյուլի-Զարն ու Ասլ-Զադեն էլ խըդ իրար զրուցք էնին։

Գյուլի-Զար Ասլ-Զադին ըսաց.— Ասլ-Զադա, էս քու ախպեր չէ, դու ուրիշ թագավորի տղա ես։ Քու հեր խալիվոր էղեր, խեղճ էղեր։

Ըսաց.— Ի՞մալ, ես էս թագավորի տղեն չե՞մ։

Ըսաց.— Առաճուց քու խեր ավլադ չունեցե։ Քու խեր ունեցած չունեցած ախքատի է տվե։ Աստված էլ գթաց քըզի քու հոր տվեց։ Հմա, էսա թագավորի դարգըխի հ'առեճը դու քո մամուց օր էղար, իրեք աղունիկ էկան մարթու կերպարանք դարձան էն օր քըզի օրշ-նիթք տվեցին։ Դռնպահ դևն իմացավ, գնաց թագավորին ըսաց,

քզի քու խորից գնեցին, որ թագավորի համար մորթեն, ֆոռն էփին, թագավորին կերցնին։ Դև չկերցավ քրզի սպանեց, քրզի հոլրդմ շիքեց, քրզի մեջ դնեց։ Աստծու հրաման էղավ, մե ջեյրանըմ էկավ քրզի ծիծ տվեց։ Էս քու ուժը էն օրշնեթքից ու էն ջեյրանի կաթիցն է։ Թե էս իմ խոսքերիս չըս ավտնա, խարցու թագավորից, թը քրզի սարի գլխից, ջեյրանի իդևեն բռնած ա՞, թե չէ։

Խոսքերից ետ էկան թագավորի քաղաք հասան։

Թագավոր տեսնելով տղեքներին, շատ ուրախցավ։ Էլավ Ասլ-Զադի ճակատ պաքեց։

Թագավոր ըսաց.— Շատ ապրիս, իմ որդիս, շատ խորոտ խարսներ բերեր եք։ — Թագավոր ուր լալին ըսաց.— Մեծ պատրաստութուն ուժ կտեսնիս որ Ասլ-Զադին վաղ, յա մեկել որ պսակենք։

Ասլ-Զադեն էլավ օտաց կանավ, խնդրեց, ըսաց.

— Ինձ դաստուր տաս, էրթամ հասնիմ հորրս, ես էլ թագավորի տղա եմ։

— Չէ՛,— ըսաց,— Ասլ-Զադե, քրզի էներ եմ իմ հոգեկան որդի։

Ըսաց.— Խնդրեմ, ես քու տղեն եմ, նորեն դաստուր տուր էրթամ հորրս խասնիմ։

Թագավոր ըսաց.— Քու քեֆն ա, քու հարսնիք կէնիմ, կէրթաս դու գինաս, կմնաս, դու դինաս։

Գյուլի-Զար ըսաց.— Կխնդրեմ իմ մեծ տեքր հարսնիք էնիս։

Ըսաց.— Որ դուք շոկություն չեք էնե, աղե՛կ, էնոր հարսնիք էնինք։

Յոթ օր, գիշեր ցերեկ հարսնիք էնեց, զուր տղեն պսակեց։ Պատրաստութուն տեսավ, յոթ օր գիշեր ցերեկ՝ Ասլ-Զադին պսակեց։

Ասլ-Զադեն ու Գյուլի-Զար շատ խնթրվան թագավորից որ ճամփու դնա։

Թագավոր էլավ իրան մալը խրդ Ասլ-Զադին կիսեց, Ասլ-Զադին ճամփու դրեց։

Ասլ-Զադեն ու Գյուլի-Զար շատ ու քիչ ճամփա էկան, խասան խոր քաղաքին։

Քաղաքի մոտ Գյուլի-Զար մե տղի ըսաց.— Կէրթաք ձեր թագավորին աչքալուս կիտաք, կըսիք, թե. «Քու ծախած տղեն մեծացե, կուգա քու մոտ»։

Տղեն որ գնաց թագավորին աչքալուս տվեց, թագավոր էդ բան որ լսեց, շատ ուրախցավ։ Էլավ մարթկանցով հ՚առաջ գնաց, տե-

սավ աղին, ուրախացավ, տղի էրես պաքեց։ Տղեն խոր ձեռք պաքեց։ Գյուլի-Զար էկավ թագավորի օտաց վրեն ընկավ, թագավորի ծեռն պաքեց։ Թագավոր Գյուլի-Զարի ճակատ պաքեց։

— Շատ ապրես,— ըսաց,— որդիս։

Էգմալ ասելով մեկ մեկի թևին ընկան ու գացին ուրանց տուն։

Ողիրներ աչքալուս էկան թագավորին։

Էրկնուց իջավ իրեք խատ խնձոր. մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ փայ էնողին։

16—1086